ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/15» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 15.05.2020թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Թ. Ստեփանյանը,

գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/15» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ.Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը, տեղեկատվություն բանակցությունների վարման և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.
4. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ.Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Յունիվերսալ Մայնինգ» ՍՊԸ
2	«Արփա-Սևան» ԲԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Յունիվերսալ Մայնինգ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի, մասնավորապես՝

- «Յունիվերսալ Մայնինգ» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված N 1) իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվության աղյուսակում լրացված չէ իրական շահառու Սենիկյան Սյուզաննայի հայրանունը և անձը հաստատող փաստաթղթի տեսակը (անձնագիր/ նույնականացման քարտ):
- Ձեր կողմից ներկայացված՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) Դիզել գեներատորի (Էլեկտրական գեներատոր 10-13 Կվտ) տեխնիկական բնութագրում բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարամետրերի վերաբերյալ տեղեկատվությունը.

-շարժիչի աշխատանքային ռեսուրսը ոչ պակաս 10000 մոտո/ժամ,
8 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով:

Ինչպես նաև բացակայում է հրավերով պահանջվող՝ Դիզել գեներատորի մատակարարման ժամանակ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտության և ՊՆ ներկայացուցչի ներկայությամբ տեղում փորձարկում կատարելու վերաբերյալ տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ 19.05.2020թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

ծանուցեց «Յունիվերսալ Մայնինգ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

21.05.2020թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «Յունիվերսալ Մայնինգ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը և նիստը շարունակվեց::

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Գնան առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Նախահաշվայի գին ՀՀ դրամ	Մասնակիցներ	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Դիզել գեներատոր (էլեկտրական գեներատոր 10-13 Կվտ)	հատ	10	15,000,000	«Յունիվերսալ Մայնինգ» ՍՊԸ	26,560,000	4,790,000	6,270,000	37,620,000
					«Արփա-Սևան» ԲԲԸ	30,000,000	3,300,000	6,660,000	39,960,000

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Քանի որ «էլեկտրական սարքավորումների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/15» ծածկագրով ընթացակարգի տվյալ չափաբաժնի մասով մասնակիցների առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշեց գների նվազեցման նպատակով 26.05.2020թ. ժամը 10:00-ին ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հետ («Յունիվերսալ Մայնինգ» ՍՊԸ-ի և «Արփա-Սևան» ԲԲԸ-ի հետ) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը նշված մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեց նշված բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3.4 26.05.2020թ. ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին նախատեսված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցները ներկայացել են բանակցության, սակայն նրանք հրաժարվեցին նվազեցնել առաջարկված գները և նրանց կողմից ներկայացված գնային առաջարկները մնացին անփոփոխ:

3.5 Նկատելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) հանձնաժողովն որոշեց՝ ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

4.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Լ.Թազայան)

5.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/15» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ս. Սարգսյան

Գնահատող Թ.Ստեփանյան

Գնումները համակարգող Լ. Թազայան